

ՇՏԵՄԵՐԱՆ

ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԵԸՑ

ՀԱՏՈՐ 7:

ԳԵԿՏԵՄԻՆԻ 1. 1854:

ԹԻՒ 84:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ ՆԻՒԹՈՑ

Թղթակցութիւն . Երեւ . 177 : Սննդեան ազատելու գեղ մը . Եր . 181 : "ԱՅա" Եստուծոյ Գառը" . Եր . 181 : Ենձնասպանութեան որոշում . Եր . 182 : Եպրիլ ու մեռնիլ . Եր . 185 : Հագուստի վրայով խրատներ . Եր . 186 : Գիւտք , Գարբ , և զարգացմունք . Եր . 187 : Եղէկ փորձաքար մը . Եր . 187 : Գրգռութիւնով բան ընել . Եր . 188 : Վճիթէսին մահը . Եր . 189 : Եստուծոյ գործակից ըլլալ . Եր . 190 : "ԱՅա" իրեք տարի է" . Եր . 190 : Ենհատի մը իր զաւկին համար ըրած ընտրութիւնը . Եր . 190 : Գիւտք . Եր . 190 : Պղտիկ սկզբնաւորութիւններ . Եր . 191 : Վերաբուժական հրաշխիք . նորաշէն քիթ մը . Եր . 191 : Գաղտնիք մը . Եր . 192 :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Մոնթոպան . Յուլիս 15 , 1854

Փիլեմոնիէի մէջ Բրոթէսթանդից եկեղեցի մը բացուեցաւ . և Ղ'նուկայի , Նիսի , Օսթի , Գալալայի , Սան Մաւրոյի , Քաղալայի և մէջ Բրոթէսթանդ ժողովատեղիներ կան : Յիսուս Քրիստոսի մէջ եղած ճշմարտութիւնը՝ ամէն տեղ իրեն ուշադրութեամբ մտիկ ընող ունկընդիրներ , և զանիկա ընդունելու աղէկ պատրաստուած սիրտեր կը գտնէ : Կերեայ թէ Իտալացիք անհամբերութեամբ կ'սպասեն մէկ պատեհութեան մը՝ որ քահանաներուն լուծը վրաներնէն նետեն . և թէ որ կրօնական ազատութիւնը՝ աս Իտալական Թերակղզիին մէկ ծայրէն մինչև միւսը հաստատուած ըլլար , դարձերուն թիւր խիստ շատ պիտի ըլլար՝ քիչ

ատենին մէջ : Իրաց աս վիճակին մէջ՝ կ'երեայ թէ վալտենցիք և Փիլեմոնիէցիք մէկ մեծ գործ մը գլուխ հանելու կանչած է՝ Վախախնամութիւնը : Եստուծոյ Իտալացի ըլլալը , և իրենց կրօնքին նուիրելը՝ որ Լուտերի և Կալվինի վերանորոգութենէն առաջ ալ կար , շատ յարմարութիւն կու տան իրենց օգտակար ազդեցութիւն մը բանեցնելու : Բայց որովհետև շատուր չեն , անոր համար ալ ամէն բանը չեն կրնար ընել . և երբ որ հաւատարիմ և ճիշդ տէր օգնական մը կը գտնեն , իրենց օգնելու կը կանչեն . ինչպէս որ ասանկ ըրին նաև Պ . Տէ Սանթիան ալ կանչելով : Բայց անոր՝ և իր ըրած գործքերուն վրայ ըսելէն առաջ՝ քանի մը բաներ պիտի պատմեմ Թուրքիի մէջ Իտալական վերանորոգելիէցի հաստատուելուն վրայով :

Ես բանը 1850ին եղաւ : Վալտենցիները արդէն արտօնութիւն առած էին աս քաղաքին մէջ Եստուածային պաշտօն մատուցանելու , բայց իրենց կրօնքը ընդունող Հոմոքլանները չէին կրնար յայտնի ժողովուրդ իրենց հետ : Վերջապէս Փիլեմոնիէի Զորերուն մէկ Հովիւր՝ աս խեղճ և ցրուած ոչխարներուն համար բան մը ընելու ձեռք զարկաւ : Վախ և առաջ անոնց մէջ անտարբերութեան և պաղութեան երկոյթ մը տեսաւ : Բայց ասոնց վիճակը լաւ

նալ սկսեց 1851ին : Բանի մը բարեպաշտ ան-
 ձինք՝ որ Թուրքանայի Ս եճ Գուբսին կրօնական
 խստութեամբը քորուած էին անկէց , Թու-
 րին եկան . և անոնց օգնութեամբը կանոնա-
 ւոր ժողովներ հաստատուեցան : Եւ այն տարւոյն
 Հոկտեմբեր ամսուն մէջ , չորս Հոովմեական-
 ներ ինդիք ըրին որ Բրոթէսթանդներուն
 հաղորդութեանը ընդունուին : Եւ նոր Իտա-
 լական եկեղեցիին առաջին պտուղներն էին ա-
 սոնք : Գարձողներէն մէկը հինուց դատաւոր
 մըն էր՝ որ ճշմարտութեան սիրոյն համար
 չվստիցաւ իր պատուաւոր աշխարհային վիճակը
 մերժել , և աղքատիկ կեանք մը անցընելու
 յանձնառու եղաւ : Գարձողներէն մէկ ու-
 րին ալ սոսկ գործաւոր մըն էր՝ որ առաջ հըռ-
 չակաւոր էր իր մոլութիւններուն կողմանէ ,
 բայց հիմա Տերօջը ձամբուն մէջ շատ նախան-
 ձաւոր մէկ մըն է :

Ես պզտիկ սկզբնաւորութիւնէն՝ Եւետարա-
 նին քարոզութեան գործը շուտ և շարունակ
 յառաջադիմութիւն ըրաւ : Գարձողներուն
 թիւը շուտ մը քսանի հասաւ , ետքը յիսու-
 նի , և ետքը ութսունի հասաւ . մինչև որ ալ
 հասկցուեցաւ թէ ուրիշ Հովիւի մըն ալ կա-
 րօտ են . և ան ատենը Փիէմոնթի Զորերուն
 Վալտեցի եկեղեցականները Պ . Տէ Սանթիսը
 հրաւիրեցին՝ որ Ղենուլայի մէջ Իտալացի սա-
 կաւթիւ ժողովուրդի մը վրայ հովուութիւն
 կ'ընէր :

Պ . Տէ Սանթիս շատ տարի քահանայ էր
 Հոովմայի մէկ ժողովուրդապետական թեմին
 մէջ : Հոովմեականաց Եստուածաբանական
 դպրոցի մը մէջ՝ Սուրբ Գրոց քննական դասա-
 տուութեան պաշտօնը իր վրան սրուած ըլլալով ,
 ուշադրութեամբ Սուրբ Գիրքը կարգալու պա-
 րապեցաւ . և աս ուսումը՝ Պապական սոսկալի
 սխալանքները հասկընալու պատճառ եղաւ :
 Իր խղճմտանքին ձայնին նազանդելու որոշում
 ընելով , բոլոր իր աշխարհային շահերը մէկզի
 թողուց . և շատ մը փորձանքներ քաշելէն ե-
 տե՛ Եւրոպա կղզին փախչելու յաջողեցաւ :
 Եւ տեղ Օրագիր մը հրատարակելու ձեռք
 զարկաւ՝ որուն անունը Բաթիօլէ Գրեպոնիայ
 էր . և Եկանջուր խոստովանութեան վրայ
 ալ տետրակ մը հրատարակեց , որ մինչև հի-
 մա տասնուչորս հեղ տպուեցաւ : Եսկէ ետե
 ինքը Ղենուլա կանչուեցաւ՝ ինչպէս որ ըսի ,
 և հիմա անկէ ելլելով՝ Իտալիա դարձաւ . եր-

ջանիկ ըլլալով որ Եստուծոյ զարմանալի սե-
 րը իր հայրենակիցներուն քարոզելու պաշտօնը
 ունենալու կարող եղաւ : Ինքը շատ բարեպաշտ
 ու ծանրաբարոյ անձ մըն է . լռիկ , պաղ , և
 քաջուած կ'երեւայ առջի բերան տեսնուելուն ,
 բայց Եւետարանին գործին համար եռանդուն
 և անձնանուէր մէկն է : Հոովմեական քա-
 հանաները բնականապէս անոր դէմ դառն ա-
 տելութիւն մը ունին , բայց միանգամայն իրմէն
 ալ կը վախնան . և ասոր մականունը կրօնէր
 կալէն դրած են : Բայց Պ . Տէ Սանթիսին
 համեստութեանը չնքեր որ ասանկ փառաւոր
 պատուանուն մը ընդունի :

Թուրքինի մէջ մասնաւորապէս իրեն յանձ-
 նուած էր նոր դարձանքներուն՝ կամ անուններին
 արձանագրել տուող նորահաւատներուն հա-
 ւատոյ հրահանգութիւն ընել , որոնց թիւը
 200ի կը հասնի : Եւ տուով մը աս նոր դար-
 ձանքներէն 80 հոգի սուրբ հաղորդութեան ըն-
 դունուեցան : Նորահաւատներուն թիւը շուտ
 մը աւելցաւ : Հոովմեականները այնչափ ան-
 յաբ փափաք ունէին Եստուծոյ Սուրբ Խօս-
 քին՝ որ կիրակի օրերը իրեք անգամ պաշտօն
 ըլլալէն զատ , լուր օրերն ալ սորված հաւա-
 տոյ հրահանգութիւններին հաղիւ թէ զե-
 րենք գո՛հ կ'ընէր : Հիմակուհիմա Թուրքինի
 Իտալական Եկեղեցին 300 հաղորդական ան-
 դամ ունի . որոնք մէկիկ մէկիկ ընդունուեցան՝
 մտադիր և զգուշաւոր քննութիւն ըլլուելէն ,
 ու որչափ որ մարդս կարող է դատել՝ Եւետա-
 րանը սրտանց ընդունելուն բաւական վկայու-
 թիւն տալէն ետե :

Եսկէ զատ իրենց վարքն ալ կանոնաւոր , և
 բարոյականնին աղէկ է : Իրենց հաւատքը
 գործքով կը պատուեն . և աս նոր դարձա-
 ներուն անկեղծութեանը մէկ գլխաւոր նշանն
 ալ աս է որ՝ իրենց հաւատքը տարածելու
 չափազանց նախանձաւոր են : Եսոնց մեճ մասը
 գործաւորներ են՝ որոնց ժամանակը ապրուստ-
 նին հոգալու հաղիւ կը բաւէ . բայց և այնպէս՝
 իրենց գործէն ազատելէն ետե , և մասնա-
 ւորապէս կիրակի ու Տօն օրերը՝ կամ Թու-
 րինի մէջ , կամ մօտերը եղած գեղերուն տու-
 ները կ'երթան Եստուածաշունչ և կրօնական
 տետրակ տարածելու : Եսոնք նաև պատե-
 հութիւն կը փնտռեն իրենց հաւատքը քարո-
 զելու , և անկեղծութեամբ կը խօսին թէ Տէ-
 րը ինչ բարեք ըրաւ իրենց հոգիներուն : Ես

խոնարհ ջանքերը անպտուղ չնդան : Հատ անձինք՝ որոնք քահանաներուն ըրած զօրպատուութիւններովը խարուած էին , և կը կարծէին թէ Բրօթէսթանդները անհաւատ են , հասկըցան որ Վերանորոգութեան ճշմարիտ աշակերանները՝ Հոովմեականներէն շատ աւելի հաստատ հաւատացեալներ են . և ասոնցմէ ոմանք աս բանէն շարժելով՝ Պ . Տէ Սանթթիսին քարոզը մտիկ ընելու գացին : Վալտենցոց Թուրինին մէջի եկեղեցւոյն շէնքը՝ որ 1500 հոգիի տեղ ունի , խորին ուշադրութեամբ մտիկ ընող ժողովուրդով լեցուն է միշտ :

Կանոնաւոր պաշտօններէն զատ՝ Հոյիւնները պատրաստ են նաև ինչ և իցէ պատեհութիւն մը ձեռք ձգելով Լեւտարանը քարոզելու . ուրոնց մէջն է ննջեցեալի թաղման պաշտօնին պատեհութիւնն ալ : Քահանաները իրենց սովորական անիրաւ չարութիւնովը անանկ կը ձևացընեն թէ՛ Վալտենցիք մեռելներնին սոսկաթ շան պէս կը թաղեն , առանց մէկ կրօնական արարողութեան մը : Ըս գարշելի ստուրթիւնը Տերքելու համար , Պ . Տէ Սանթթիս և իր ընկերները ընտրեցին որ նարաւոր եղածին չափ՝ Արապի օրը , կամ տեղացիներուն գործէ աղատած ու հանգչած մէկ ժամանակը յուղարկաւորութեան պաշտօնը կատարին : Իտալացիք անանկ ատեններ խուճը խուճը կը ժողովուրին , ու հետաքրքրութեամբ տեսնել կ'ուզեն թէ Վալտենցիք ի՞նչպէս իրենց մեռելները կը խաղէն . բայց ի՞նչ կը տեսնեն : Օտողք և բարեկամք ջերմուանդ կերպով մեռողին բոլորտիքը պատած , և Քրիստոսի պաշտօնեան՝ անմահութեան , յարութեան և վերջին դատաստանին մեծ ճշմարտութիւնները քարոզելու զըզաղած : Ըս սուրբ հանգէսին նկատմամբ յարգական զգածումով մը լեցուած կ'երթան մարդիկը , և անոնցմէ շատերը հետեւալ Արապիին Բրօթէսթանդներուն հրապարական պաշտամունքին ներկայ կը գտնուին : Ըսանկով՝ քանի որ մէկ կողմէն քահանաները անգաղար կը պնդեն թէ Բրօթէսթանդութիւնը ամէն տեսակ հաւատքը կ'ուրանայ , Վալտենցիները միւս կողմէն շարունակ կը քարոզեն թէ՛ Ըստուածաշունչը իրենց կրօնական սկզբունքներուն կանոնն է :

Չամաղան գժուարութիւններ պատահեցան աս աւետարանելու գործին յառաջադիմութեանը մէջ : Ըրտապախանները՝ օրինակի աղաղաւ ,

որոնք ընդհանրապէս անհաւատ են , կը կարծէին թէ Բրօթէսթանդները օգտակար նեցուկ մը պիտի ըլլան իրենց : Ուստի ջանք ըրին Վալտենցիներուն հետ տեսութիւն ընելու , և շատ անգամ ժողովքներուն մէջ գտնուելու , և բարձրաձայն կը յայտնէին անոնց հետ համակրութիւն ունենալին : Բայց հետեւանքը սա եղաւ որ շուտով իմացան թէ՛ Պապականութիւնն ուրանալը բաւական չէ՛ Վերանորոգեալ եկեղեցիներուն հետ հաղորդութիւն ունենալու . և թէ՛ Բրօթէսթանդները որոշ վարդապետութիւններ կ'ընդունին , և խիստ բարոյականութեան պաշտպան են : Ըս արմատականները՝ կամ աս անհաւատները՝ ան ատենը ետ քաշուեցան , ըսելով թէ Ըրտապախաններն ալ բոլոր ուրիշներուն պէս կոյր նախանձաւոր և կարճամիտ են . և անոնց բարեկամութիւնը՝ թշնամութեան փոխուեցաւ : Հիմա ասոր ի՞նչ ընելու է : Բրօթէսթանդութիւնը իր սուրբ դրօշակը ամուր բռնելու է . միշտ դաւանելու է որ ուրիշ անուն մը չկայ երկինքին տակը տրուած , օյլ մի միայն Քրիստոսի անունովն է որ մարդիկ կրնան փրկուիլ : (Վորթ . դ . 12 :) Եւ թէ որ անհաւատները գո՛հ չեն ասոր , թող մէկ զի՞ք քաշուին : Քրիստոնեաները չեն կրնար նենդութիւն ընելով անոնց կողմնակցութիւնը ստանալ :

Ըրդէն յիշեցի Փիլեմոնդէի մէջ գտնուած քահանաներուն աննարին հակառակութիւնը : Եպիսկոպոսներն ու քահանաները մասնաւորապէս աշխատեցան , իրենց հին արուեստին համեմատ՝ աշխարհային իշխանութեան օգնութիւնը Բրօթէսթանդներուն դէմ գործածելու : Թագաւորին և ատենակալաց ժողովին աղերսագիր խրկեցին , և ինդրեցին որ հերեպիկոսմէրոն թոյլտուութիւն չըլլայ Թուրինի մէջ եկեղեցի շինելու : Կառավարութեան Պաշտօնեաները պատասխան տուին թէ ան շէնքին կառուցուիլը՝ Տէրութեան սահմանադրութեամբը կրօնական աղատութիւն շնորհուելուն հարկաւորապէս հետեւանքն է : Ըս կողմանէ պրդտիկ իյնալով Պապական կարգաւորները՝ ուրիշ միջոց մը ձեռք առին : Ստորին դատաստանարաններուն մէջ կրօնական խստութեան ոգի մը զրգուեցին , և երբեմն դատապարտութեան վճիռներ ալ առին : Քաղաք ըստուած տեղը մասնաւորապէս՝ Լեւտարան քարոզող մը իրեք ամիս բանտարկելութեան դատապար-

տուեցաւ, անոր համար որ Մատուածաշունչ կարգացեր ու քանի մը բարեկամներու հետ առօրթիք ըրեր էր : Եւ երբ իմացուեցաւ որ աս Մետարանիչը Վրիստոնէական խրատներ կուտար իրեն հետ բանտին մէջն եղող յանցաւորներուն՝ քահանաները խնդիրք ըրին որ ասանքն Բանտի մէջ դրուի, որ չըլլայ թէ Պապական աւազակները մոլորցընէ :

Թուրինի մէջ՝ Պապականութենէ նոր դարձողները սաստիկ փորձութիւններու ենթակայ եղած են : Հռովմայի կղերները կը բռնադատեն, բանադրանք սպառնալով գործատերերուն՝ որ իրենց քով հերետիկոս բանւորները ճամբեն. հայրերուն՝ որ իրենց հերետիկոս զակիրները տուններնուն դուրս ընեն : Քանի մը ծնողք ալ խոստովանահայր քահանաներնէն թելադրուած, Ժառանգութիւնի զրկեցին իրենց զակիրներին՝ Մետարանական եկեղեցւոյ անգամ ըլլալնուն համար : Երիւնակացական և ընտանեկան ամենէն սրբազան կապերը ինչ են Պապական հաւատքին յարող մուսուլմաններուն համար :

Բայց ամէնը աս է. Հռովմեական կարգաւորները Բանտի մէջ մը հաստատեցին Թուրինի գլխաւոր եկեղեցիներուն մէջ՝ Բրոթէսութանութեան դէմ, և բարձրաձայն կը հակառակին անթիւ զգալարտութեամբ : Ընոնք անանկ կը կեղծեն թէ՛ Վալտենցի Հովիւները Բարոյականի դէմ սկզբունքներ կը սորվեցընեն. ասիկա իրաւ որ անձոռնի՝ ամբաստանութիւն մըն է անոնց կողմանէ՝ որ կ'ընդունին Ղիզլեթական վարդապետութիւններուն բարոյականի դէմ ըլլալը : Քահանաները նաև բոլոր իրենց ամպիոններէն քարոզեցին որ՝ Բրոթէսութանները հոգեկէրը սպառնալով Ժառանգութեան : Պ. Տէ Սանթթիսն ու իր ընկերակից պաշտօնեաները հրապարակաւ պահանջեցին Պապական քարոզիչներէն՝ որ մէկ իրօք եղած բան մը ցուցընեն, և ամբաստանալներուն անունները մէկիկ մէկիկ տան. բայց աս պահանջմունքը բանի տեղ չեն դնիր անոնք. և իրենք դարձեալ կը շարունակեն իրենց ամբաստանութիւնները՝ թէ և բան մըն ալ իրօք չկրնան ցուցընել : Իրենց կանոնը աս է. Օրպարտէ, զգարտէ անդադար. քու հակառակորդներուդ գոնէ անկէ քիչ մը վնաս կ'ըլլայ միշտ. զգարտութիւնը անուխի կը նմանի՝ որ երբ չկրնայ ալ վառիլ, գոնէ կը սեցընէ :

Բանն աս է որ՝ Բրոթէսութանը Հովիւները շատ զգուշաւոր են նոր անգամ մը եկեղեցւոյ հաղորդութեանը ընդունելու : Ընոնք մինչև անգամ անդիի ծայրը անցած են աս մասին : Գարձաձններուն բնաւ դրամական նպաստ չեն ընել : Օրինակի համար. քանի մը քահանաներ ըսին որ՝ պատրաստ են Հռովմեական եկեղեցիին մոլորութիւնները ձգելու՝ թէ որ իրենց ապրուստին միջոցը ապահով ըլլայ : Պ. Տէ Սանթթիս անոնց սա պատասխանը տուաւ. (Չգտակար գործ մը ընելու յանձնառու ըլլալով սկսեցէք, ձեր ապրուստը համեստութեամբ վատրկեցէք, անկէ ետեւ թէ որ ձեր առաջադրութեանը մէջ յարատեւէք՝ և Վերանորոգեալ հաւատքը ընդունիք, մենք ալ ձեզ հաղորդական ըլլալուններուն թիւին մէջ կ'ընդունինք. բայց աշխարհային շահ մը մ'ակնկալէք մենէ : Ընանկներ ալ կան աս նոր դարձողներուն մէջ՝ որ շատ կարօտութիւն քաշելու յանձնառու եղան առանց մէկու մը բան մը իմացընելու, քան թէ ողորմութիւն խնդրել դիմելու. որպէս զի մարդոց խղճմտանքները ծախու կ'առնեն ըտղներուն նախատինքին տակ չձգեն իրենց եղբայրները :

Ես ամէն զժողովութիւններն ըլլալով ալ՝ Թուրինի մէջն եղող Մետարանի բարեկամները զանազան ընկերակցութիւններ կազմեցին, որոնք շատ յարմար են իրենց գործողութեան սահմանը ընդարձակելու : Վախակրթական դպրատուններ հաստատեցին, չափահասներուն համար երկօյեան դպրատուն մը, ու նաև կիրակիի դպրատուն մը : Ընոնք եօթը հատ կանոնաւոր դրքածախ քարոզիչ ունին՝ Թուրինի նահանգին և քաղաքին համար : Օրագիր մը կը հրատարակեն Բարի Լուր անունով՝ որուն մէջ Վրիստոնէական վարդապետութիւնները կը բացատրեն, և Պապականութեան յարձակումներուն կը պատասխանեն : Եւստորէն կը ցրուեն երկրին կարօտութեանցը յարմար կրօնական տետրակները : Փոքրիկ Գրքատուն մը ունին՝ վրան խոշոր գիրերով այսպէս գրուած. «Գրքատուն Մետարանական» . ասիկա Վրիստոնէական գիրքեր ծախելու համար է. և վերջապէս քաղաքին արուարձաններուն մէջ երկրորդական չորս մանր մատուոններ՝ բարձր աշտարակներու պէս կանգնած են լոյս և կեանք տալու : Հիմա ալ ստակ կը ժողովին որ Բրոթէսութանի հերետիկոսացի մը բանան. վասն զի

Հոովմեականաց հիւանդանոցներուն մէջ՝ ստակալի փորձութիւններու ենթակայ եղած են Բրօթէսթանդուլթեան դարձողները, մինչև անգամ իրենց մահուան անկողինին վրայ ալ :

Վերջ կ'ընեմ խօսքս՝ մօտերս պատահած նոր մէկ դէպք մը պատմելով :

Թուրինցի համեստ կին մը՝ որ պտուղ ծախող մըն է, Եստուծոյ խօսքը ընդունեց, և ուրախութեամբ կը կարդար զանիկա : Կամուրջի մը բերանը նստած ըլլալով իր աղքատիկ խանութիկին մէջ, պարսպ գտած ատենը Սուրբ Գիրքը կարդալով կ'անցընէր : Ես տեղէն Հրոովմեական քահանայ մը անցաւ :

« Ի՞նչ Գիրք է ան կարդացածդ », հարցուց ասիկա :

« Եստուծոյ խօսքն է, Պարօն » :

« Եստուծոյ Խօսքը • բայց ո՞վ ըսաւ քեզի ատիկա » :

« Եստուած ինքը » :

« Ի՞նչքա՞ն ի՞նչ խնդութիւն • Եստուած քեզի հետ խօսեցա՞ւ • ի՞նչ ապացոյց կրնաս տալ ինձի ատոր վրայով » :

« Պարօն », պատասխանեց բարի կինը • « աս ապացոյց տո՛ւր ինձի թէ նա արևը մեր գլխուն վրայ է » :

« Ետոր ի՞նչու ապացոյց տամ • Երբին հօն ըլլալու ամենէն աղէկ ապացոյցը ան է որ՝ մեզի լոյս կու տայ և մեզ կը տաքցընէ » :

« Ե՛հ, իմ ըսելիքս ալ ատ է քեզի », կանչեց կինը յաղթանակաւ մը • « Ես Գիրքին Եստուծոյ խօսքն ըլլալուն ամենէն աղէկ ապացոյցը ան է որ՝ իմ հոգիս կը լուսաւորէ ու կը տաքցընէ » :

Քահանան սրդողելով առաւ քալեց • և ամէն տեղ հրատարակեց թէ խեղճ կինը հերեւտիկոս եղեր է, ու իրեն յաճախորդներէն շատերը արգիլեց անոր հետ առուծախ ընելէն : Բայց կինը յարատուութեամբ կը շարունակէ իր հաւատքին մէջ, համարուած ըլլալով որ՝ Տէրը իր կարօտութիւնները կը հոգայ :

ՍԿԵՐԵՆ ԱՅՍԵԼՈՒ ԴԵՂ ՄԸ • Երեւոտ բօլոս աս քեզ մը, և ցանկ մըներուն ծակին բերնին բուրբ տիքը՝ քեզ մըն ալ ծակերուն տակը՝ ու նաև ուրիշ որ և էջէ տեղէ որ մկները դուրս կ'ելլեն ան տեղերուն տախտակներուն քովերը և տակերը քսէ : Ես դեղին փորձը ընող մարդը կ'ընէ թէ աս ընկես դիչեր մը հոքը ճշուրտաց մը լսեցի մկներուն մէջ, և կարծեցի թէ կալող բնութիւն ունենալով բօթասը անոնց մագերուն և ոտուրուն պլտրկած է : Ինչ որ է, աս պետք էր ինձի որ՝ կ'ըսէ, անոնցմէ աս զատիմ, և ասա տարիի մը չափ կայ որ աս բանը ըրի, և հանգիստ եմ մկներուն ձեռքէն :

«ԱՅԱ ԱՍՏՈՒ ԾՈՅ ԳԱՌԸ»

Օրջայեալ մեղաորի աչտով անո՛ր նայէ : Տէ՛ս անոր քաշած նեղութիւնները, մահուան տաղնապները, մթնցած և սասանեալ աշխարհը, որպէս զե իմանաս թէ ինչ մեծ չարիք մըն է մեղքը • ան մեղքը՝ որուն բնակարանը քու սրտիդ մէջն է • և քանի որ դուն կը նայիս անոնց, թող քու սիրտդ կակղանայ : Թա՛ղ ան քարացեալ սիրտդ կոտորի : Թա՛ղ Եստուծոյ ուղած տրտմութեանը արցունքին հեղեղները վաղէ երեսներէդ ՚ի վաք :

Հաւատքի աչտով անո՛ր նայէ : Հաւատաւ անոր քեզ փրկելու գօրութեանն ու կամեցողութեանը վրայ : Կասկած մի՛ ըներ անոր մաքրող ու կեանք տուող արիւնին գօրութեանէն : Ինքզինքդ անո՛ր ձգէ : Ինքը պէտքի ընդունի քեզ, պէտքի փրկէ քեզ : Ես խօսքը հաւատարիմ է թէ՛ ինքը աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու • և թէ՛ իբարիներ ամէն մեղքէ կը մաքրէ : Ես խօսքը ամէն ընդունելութեան արժանի է :

Երեսնամեակիս աչտով անո՛ր նայէ : Ի՛նչ բարերարութիւն կը տեսնես, դուն անոր վրայ՝ որ քեզի պէս յանցաւոր մեղաւորիդ անհուն օրհնութիւններ կու տայ, որուն գինը իրեն շատի եղած է • քեզի ներում, խաղաղութիւն և յաւիտենական կեանք կը շնորհէ՝ առանց ստակի և առանց գնոյ :

Արոյ աչտով անո՛ր նայէ : Հոս չափէ դուրս սէր մը կ'երևայ : Եստուած սէր է, և Վրիստոս ալ սէր է • և ան հոգին անտարակոյս երկու անգամ մեծ սեպելու է սիրոյ զգացման կողմանէ, որ զինքը փրկելու համար մեռնող Փրկիչը չսիրէր :

Ուրախութեան աչտով անո՛ր նայէ : Քեզի ուրախութիւն տալու համար խաչը յանձն առաւ, ամօթը արհամարհեց : Քեզի կը շնորհէ խաղաղ խղճմանք մը, ուրախութիւններ և անմահութեան յոյս մը • երկրի վրայ սուրբ կեանք մը, և մահուանդ ալ սրբազոյն երկինք մը : Արեմն, ուրախութեամբ նայէ Եստուծոյ Գառլին : Ենհո՛գ մեղաորի՛ն՝ անո՛ր նայեցէք որ մեղքը ծաղը կ'ընէք, և անուշիկ ու համով

պատառի մը պէս ակուանուդ տակը կը ծափէք : Ի՛նչ թոյն ու դառնութիւն բերող արմատի պիտի փոխուի ատ անուշութիւնը՝ երբ որ ձեր բերանը պապակի ծարուածութեան , և կաթիլ մը ջուր անգամ չպիտի տրուի անոր տաքութիւնը պող շկեցընելու՝ ու երբ որ արբեցութեան և հայհոյանքի ձայները՝ կորսուածներուն հեծութեան ձայները հանեն : Քանի որ դեռ կարող էք դո՛ւք՝ ա՛նհոգ մեղաւորներ : Նայեցէք Աստուծոյ Գառին :

Գո՛ւ՛ որ Յէր անչին արդարութիւնը հասարակ էր շնորհ , անո՛ր նայեցէք : Ունայն աշխատութիւն : Ինչու ալ ատոր ետեւէն կ'իյնաք : Մէկ դի՛ ձգեցէք վրանուդ ձեր անձնական արդարութեան հանդերձները՝ որ ձեր հոգիներուն շուրջը պատած էք : Անոնք ամէն ալ դաշտանի լաթ են : Անոնք ձեր մերկութիւնը չեն ծածկեր , չեն կրնար : Ուստի մէկ դի՛ ձգեցէք , ու Քրիստոսի նայեցէք , որ ձեզի մաքուր ու ձեր մակ հանդերձ մը հազցնէ . իր արդարութեանը հանդերձը՝ որով դուք յաւիտեան պիտի փայլիք :

Գո՛ւ՛ որ յոգնած ու ծանրաբեռնած էք Բողո՛ւ , անո՛ր նայեցէք : Ինքը ձեզի կը կանչէ . « Եկէ՛ք ինձի , և ես ձեզ պիտի հանգչեցընեմ » : Ինքը կրնայ ձեր բեռը ու ցաւերը վերցընել ձեզմէ : Ինքը յատկապէս անոր համար մեռաւ , որ ձեր տեղը ինք վերցընէ անոնք : Ինքը ձեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ , ու ձեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ : Ուստի անո՛ր նայեցէք , անո՛ր դացէք և ձեր հոգիներուն հանգիստը գտէք :

Գո՛ւ՛ սիրտերնիդ ճարած աշակերտներ , անո՛ր նայեցէք , որ չէք կրնար նախատինք ու ներութիւն քաշել իրեն համար : Ինչ ձեզի համար աշխարհին նախատինքը քաշեց : Ինչ ձեզի համար ներութիւններու համբերեց մինչև 'ի մահ : Գուք խաչին զինուորներն էք : Գառին հեռուողներն էք : Եւ դուք աս աշխարհիս մէջ թշնամի մը ղէմն ելլել չէ՞ք ուղեր : Հոսանքի մը ղէմ երթալ չէ՞ք ուղեր : Կ'ուզէք որ յաղթութեան պսակը՝ առանց պարտադրու-

մեջ առնէք : Ամբէք ձեր վախկոտութեանն ու մարած սիրտէն : Ելէ՛ք և ինքը զինքնիդ ուժով ցուցէք պատերազմին հարուածներու ղէմ՝ ղնելու . բաւական է աշակերտին որ իր վարդապետին պէս ըլլայ : Գո՛ւ՛ սիրտերնիդ անո՛ր նայեցէք , վասն զի ինքն է « Աստուծոյ Գառը՝ որ աշխարհիս մեղքերը կը վերցընէ » :

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄ

Մեր Տէրը աս աշխարհիս մէջ որչափ բարիք որ յարմար տեսած է մեր ձեռքը յանձնելու , մենք անոնց վրայ անտես դրուած ենք . և մեր պարտքն է անոնց վրայ հսկել ու զանոնք պահպանել . թէ տասը տաղանդ ունենանք՝ թէ հինգ՝ և թէ միայն մէկ հատ :

Բարեկամս մեկուն ինձի դէպք մը պատմելով՝ որուն շքմարտութիւնը ինքը կը վկայէր , աս բանին վրայ շատ խորին կերպով մտածեցի :

Միւ Եօրք քաղաքին բնակիչներէն մէկը ազնիւ մարդու մը տունը գնաց՝ որուն հետ թէպէտ անձնական ճանչուցութիւն չուներ , բայց անոր ըրած բարեբարութիւններուն և խոհական գթութիւններուն վերայով շատ բան լսած էր : « Պարոն » ըսաւ ինքը՝ երբ որ ինքզինքը անոր ճանչցընել պիտի տար , « դուք չէք գիտեր թէ ես ո՛վ եմ : Ես վտանգալից դոյժ մը բերելու եկած եմ : Ես քեզի իմացընելու եկայ՝ թէ իմ կտակագիրս շինած եմ , և բոլոր իմ ստացուածքս քեզի կը ձգեմ » :

« Ինձի » ըսաւ , զարմանքով լեցուած ըլլալով մարդը . « դուն սխալած ըլլալու ես , Պարոն . ես քեզ առաջ բնաւ տեսած ըլլալս անգամ միտքս չգար . բու ըսածդ ես ըլլալու չեմ » :

« Վայրկեան մը ինձի մոխի ըրէ » ըսաւ միւրը , « և պիտի տեսնես որ ես սխալած չեմ . և իմ ըրածս ալ հասուն խորհրդածութեամբ եղած է : Ես շատ հարուստ մարդ մըն եմ , Պարոն . և գիտեմ ալ թէ դուն ո՛վ ես , և ի՛նչ ես . ու նաև գիտեմ ալ թէ դուն անանկ մէկն ես՝ որ իմ ստակ

ներս շատ օգտակար կերպով պիտի գործածես, և որ և իցէ ուրիշ մէկու մը ընելիքէն աւելի բարիք պիտի ընես անով. աւոր համար ալ քեզ ընտրեցի որ իմ ժառանգս ըլլաս : Ինչպէս որ ըսի՝ Պարոն, ես շատ հարուստ մարդ մըն եմ, բայց մեանդամայն ալ շատ ապերջանիկ մարդ մը. ես աշխարհիս մէջ միեւնորիկ եմ, ու մէկուն հոգը չէ ինձի համար. թէ որ աս գիշեր մեռնելու ըլլամ, պուտիկ մը արցունք չպիտի թափուի ինձի համար : Ես ատենօք կին մը ունէի և պղտիկ զաւակ մը, բայց անոնք դացին. քանի տարի կ'ընէ հիմա որ անոնք մեռած են՝ Պարոն, և աս բանը գրեթէ բոլորովին կուտրեց իմ սիրտս. հիմա մէկուն հոգը չէ ինձի համար, և կը վախնամ որ ես ալ մէկուն համար հոգ չեմ ընէր աշխարհիս վրայ". աս խօսքին վրայ վայրկեան մը կանկ առաւ, և զլուխը ծռելով ձեռքերն երուն մէջը տարաւ ու ատեն մը լուռ կեցաւ. ատենէ մը ետե վերջապէս ինքն իրեն դալով՝ շարունակեց խօսքը. « Ըտեն մըն է որ՝ Պարոն, կը մտտայի թէ իմ ստացուածքս ինչ ընեմ. և ետքը ետքը սա որոշեցի Պարոն, որ անանկ տեղ մը դնեմ՝ ուր որ աւելի բարիք կրնայ ընել : Ես շատ բան լսեցի քու խոնարհ և անանապիառ գթութիւններուդ վրայով, և որոշեցի որ ամէն բան քեզի ձգեմ" :

« Կարելի է որ դուն ինէ շատ ապրիս Պարոն », պատասխանեց միւսը. « դուն տարօք ինէ պղտիկ կ'երևաս, և քու առոյգ հասակդ կը ցուցնէ թէ ինէ շատ կրնաս ապրիլ" :

« Չէ, չէ, Պարոն » ըսաւ, « ադ տեղ սխալ ունիս. ես միտքս դրեր եմ, ես հաստատ որոշեր եմ ինքզինքս վերցընել, Պարոն, չեմ ուզեր ալ աւելի ապրիլ : Կը հասկընամ որ ես աշխարհին օգուտ մը չունիմ. և քանի որ ապրիմ, իմ ստակս ալ օգուտ մը չպիտի ընէ. անոր համար ինքզինքս մէջ տեղէն վերցընելու որոշումն ըրի. ու թո՛ղ իմ ստակս ալ ուրիշներուն բարիք ընելու ծառայէ. ինձի բնաւ օգուտ մը չըրաւ. ուստի կ'աղաչեմ Պարոն, որ

ասոր դէմ ալ բան մը չըսես : Ես գիտեմ բոլոր քու ըսելիքներդ. իմ միտքս որոշուած է. բան մը չկրնար փոխել իմ որոշումս. իմ կտակագիրս պատրաստ է, և վաղուան արեւը զիս աս կենդանեաց երկրին մէջ չը պիտի գտնէ. և ես միայն աս բանին համար եկայ հիմա՝ որ քեզի իմացընեմ թէ դուն իմ ժառանգս ես, և ամենևին սխալ մտնք մը չկրնար ըլլալ աս բանին մէջ" : « Իրաւ որ քու խելքդ զլուխդ չէ՝ Պարոն. քու ուղեղդ հիւանդ է. ես քու ստացուածքդ առնելէն կը հրաժարիմ. այսպիսի պարագաներու մէջ ես բան չունիմ" :

« Իմ խելքս վրաս է՝ Պարոն. իմ որոշումս՝ ամիսներով խորհրդածութիւն ընելէս ետե եղած է. բան մը չկրնար իմ միտքս փոխել. դուն ստակը ընդունելէն զատ բան մը չես կրնար ընել : Երբ որ զիս մեռած կը գտնեն, և կը տեսնեն որ ես մտազգական չունիմ, իմ կտակագիրս ալ ըստ օրինի շինուած և վկաներով վաւերացած՝ ու իմ բոլոր հարստութիւնս քեզի ձգած եմ. քանի որ բանը ասանկ է՝ ալ ուրիշ բան մը չես կրնար ընել դուն, և ես ալ չեմ ուզեր ուրիշ մէկու մը ձգել անոնք" :

« Բայց դուն յանդգնութիւն կ'ընես. այդչափ մ'արտօրար. աս անձնասպանութեան ստակալի որոշումը մէկ դի՛ ձգէ, և քու ստակովդ բարիք ըրէ, և ուրիշները երջանիկ ըրէ" :

« Չէ, չէ, Պարոն, չեմ կրնար, չպիտի ընեմ. անոնք առանց ինձի աւելի երջանիկ պիտի ըլլան՝ բան թէ ինձմով" :

« Բայց սիրելիս, քու աս ըրած ազդարարութիւնդ անհնարին զարմանքով կը լեցընէ զիս, չե՞ս կրնար ադ ստակալի գործը ես ձգել մինչև որ նորէն ուրիշ անգամ իրար տեսնենք. վաղը եկո՛ւ և պատմէ ինձի քու ստացուածքիդ վիճակին վրայով. և թէ դուն ինչ կ'ուզես որ անոնցմով ընեմ ես : »

« Դատ աղէկ », ըսաւ, « օր մը ետքը ըլլալը շատ մեծ տարբերութիւն մը չընէր. բայց դուն չըլլայ որ իմ միտքս փոխելու աշխատիս, եթէ ոչ շուտով կը վնցընեմ բանը. բայց խօսք կու տամ քեզի՝ Պարոն, որ աս գիշեր բան մը չընեմ : Ես

առտուն քեղ տեսնելու կու գամ, և քեզի հետ կը խօսիմ իմ ստացուածոցս վրայով : Հիմա մնաք բարով՝ Պարոն», բսելով ելաւ զնաց : Մեր բարեկամը աս այցելու թիւն ընող կարգէ զուրս մարդուն վրայով երկար ատեն խորհրդածելով կ'ըսէր . ի՞նչ սարսափելի բան մը , ի՞նչ սոսկալի բան մը սա անձնասպանը միտքը դրեր է . ի՞նչ կրնայ ըլլուիլ որ սա եղեռնադործութենէն ետ կենայ սա մարդը , ու ազատի սա վտանգէն . ետքը ծնկան վրայ գալով՝ Ենկէ առաջնորդութիւն խնդրեց , որ ամէն ժամանակ օգնութիւն կ'ընէ ամէն անոնց՝ եր իրեն կը դիմեն նեղութեան մէջ : Գիտես թէ լոյս մը ճառագայթեց վրան՝ քանի որ ինքը ծնկան վրայ եկած իր խնարհ աղաչանքները կը մատուցանէր . և ելաւ կայնեցաւ հանդարտ միտքով մը՝ իր պարտաւորութեան ճամբան աչքին առջին բաց տեսնելով , և որոշեց որ մինչև հասնեալ առտուն համբերութեամբ սպասէ :

Որոշեալ ատենը թշուառ անձը երեցաւ : Ինքը առջի իրիկուրնէ աւելի տըխուր , և միտքը դրած քանին վրայ աւելի հաստատ որոշում ունեցած կ'երևար : «Իուն ինծի հետ պիտի ընկերանան», և սառ մեր բարեկամը . «ես քանի մը տողեր հանդիպելու հարկաւոր դործեր ունիմ, ու թէ որ դուն ալ հետս գաս , ճամբան քեզի հետ խօսակցելով կ'երթանք» :

Ես խօսքը զրուցելով՝ թեւր միւսին թեւին անցուց , ու երկուքը թեւ թեւի փողոցն ելան ու դացին :

«Ես առաջ հոս երթալու եմ՝ Պարոն», ըսաւ մեր բարեկամը՝ քանի որ քաղաքին մէկ ամենազարշի նեղ փողոցէն կ'անցնէին , և մէկ անդիի ծարր խեղճուկ տուն մը հասնելով՝ սկսաւ սանդուխն 'ի վեր ելել : Ես քայքայեալ շէնքին չորրորդ դատիկոնը հասնելուն՝ ցածկուկ դուան մը առջև կանկ առաւ , և կամացուկ մը ձեռքովը դուռը զարկաւ : «Երես հրամեցէք», մարած ձայն մը լուսեցաւ ներսէն : Ուստի սա ողորմելի սենեակը մտան երկուքը մէկտեղ : Ի՞նչ սարսափելի տեսարան մը դիմացնին ելաւ . վերջին աստիճան չբաւորութեան և թըշ

ուառութեան պատկերը հոս նկարուած կը տեսնուէր : Սենեակին մէկ անկիւնը խեղճուկ անկողինի մը վրայ կնիկ մը պառկած էր , որ յայտնի կ'երևար թէ վերջին աստիճան հալած մաշած է . անկողինին մէջ երկու տարեկանի չափ տղեկ մը և իրեք հատ ալ ուրիշ մանր տղաք գետնին երեսը սենեակին մէջ կծկտած նստեր էին . անանկ մը որ՝ գրեթէ միայն մեռնելու կ'սպասէին :

«Օննիկն ալ պիտի երթայ ասկէ ետև . հիմա կարգը անողն է», ըսաւ մայրը տկար ձայնով մը : Եննիկը զնաց : Ե՛հ իմ զաւակա . երեկ տարին անիկա , թէպէտ և կրցածիս չափ երկար ատեն պահեցի ես զանիկա . վեց օրուան մեռած էր երբ որ տարին զինքը , բայց» ցածկուկ ձայնով փսփսալով մը ըսաւ , «չէի համարձակէր անոնց զրուցելու : Օննիկը հիմա շտակէ շիտակ չկրնար նստիլ՝ Պարոն . և նա տեղի խեղճ ողորմելի արարածներն ալ՝ Պարոն , հաղիւ թէ ինքզինքնին վերցընելու ուժ ունին . ի՞նչ կրնամ ընել» :

«Ես ի՞նչ բան է . ամէնն ալ սովամահ անօթի են» ըսաւ մեր բարեկամին հարուստ ընկերը . «հաց կ'ուզեն . հաց չըլլալուն՝ մահուան դուռը հասած են . հոս եկո , ա՛ռ սա , ա՛ռ սա , շուտ բրէ» բսելով քսակը և զրպանները պարպեց , և բոլոր ստակները թափեց առատաբաշխ ձեռքով մը :

«Ի՞նչ են բոլոր ասոնք՝ Պարոն», և սա հիւանդ կիներ անկողինէն վեր նետուելով մը . «մեզի համար կու տաս ազ ստակները . ո՛վ Եստուած՝ շնորհակալ եմ քեզմէ , օրհնեալ ըլլաս դուն՝ Պարոն : Տղանքս՝ ահա՛ ձեր հացը ճարուեցաւ . տակաւին Օննիկին ապրելու յոյս կայ» :

«Գնա՛ հաց ու միս առ տղե՛կս» ըսաւ աս առատաձեռն Պարոնը պզտիկ տղու մը՝ որ ութը տարեկանի չափ կար , ու ան սենեակին մէջ գտնուող խումբին ամենէն մեծն էր : «Չէ՛ , չէ՛ , կեցիլը ես ալ հետդ գամ . կրակ ալ պէտք է , բժիշկ , տղաքը դարմանող մը , ու հաց ալ» : Եւ անիկա պզտիկ տղուն ձեռքէն բռնելով՝ երկուքը մէկտեղ սենեակէն դուրս ելան :

Խեղճ կնիկը գիտես թէ բոլորովին ըննոցաւ . «երա՞ղ կը տեսնեմ արդեօք» ըսաւ կինը , «որ աս պզտիկ տղոցը հայ պիտի գայ . փառք քեզ Նստուած» :

Մեր բարեկամը կնկանը քովը գնաց նստաւ , և ըսաւ որ ան Պարոնը շատ հարուստ մէկն է , և կրնայ իրեն օգնել . ու անոր համար իր հետը հոն բերած է որ տեսնէ իրենց վիճակը , ու օգնութիւն ընէ իրենց :

Քիչ ատենէն Պարոնը տուն դարձաւ հետը խել մը պաշար բերելով , ու մարած կրակարանին համար ածուխ . և քիչ մը ետքն ալ վարպետ բժիշկ մը , և վայելուչ տեսքով դարմանող մը սենեակէն ներս մը տաւ : «Արցածդ ընելու ես աս խեղճերուն առողջութեանը համար» , ըսաւ բժշկին , «և ես քեզի հատուցում պիտի ընեմ : Գուն ալ դա՛րմանող՝ աս խեղճ ողորմելի արարածներուն աղէկ հոգ տար աս գիշեր , և վաղը անոնք հանգիստ տեղ մը պիտի փոխեմ» . ասոնք ապապրելով ելաւ գընաց՝ խեղճերը անանկ հանգստութեան մը մէջ ձգելով , որ շատ ատենէ ՚ի վեր տեսած չունէին . և խօսք ալ տուաւ որ հետևեալ օրը գայ ու աւելի մաքուր և հանգիստ բնակարան մը տանի զիրենք :

Մեր բարեկամը սկսաւ խօսիլ իր ընկերին հետ աս զժբաղդ ընտանիքին գլուխը եկած փորձանքներուն վրայով՝ որոնց քանի մը օրէ տեղեակ եղեր էր : Իմացուց իրեն թէ աս խեղճ կնկանը էրիկը քանի մը շաբաթ առաջ երկաթի ճամբու մը վրայ սպանուեր էր , ուր որ ինքը ատենէ մը ՚ի վեր ճամբաները շտկելու գործով պարապած է եղեր . և թէ աս փորձանքը պատահելով՝ իր կնիկն ու բոլոր զաւկրները յետին աստիճան չքաւորութեան մէջ մնացեր են : Ես խօսքերէն ետև ամենեւին ձայն մը չելաւ միւսին կողմէն՝ առջև իրիկուան խօսակցութեանը վրայով , ուստի՝ աս երկու նոր բարեկամները մէկըմէկու սիրով և ուրախութեամբ Մնաս բարով ըսելով՝ հին բարեկամներու պէս բաժնուեցան : Հետևեալ օրը անցաւ , և մեր բարեկամը բան մը չսեց որոշուած անձ .

նասպանութեանը վրայով . բայց իրիկուան դէմ նորէն զինքը տեսնելու եկաւ : Մենեակէն ներս մտած ատենը՝ երեսը ուրախութեամբ կը փայլէր , երբ որ ձեռք ձեռքի կու տային զերար ողջունելու համար : «Պարոն» ըսաւ ինքը , «դուն իմ կեանքս ազատեցիր . թէ որ Նստուծոյ կամքն է , ես իրեն ծառայելու համար պիտի ապրիմ : Ես տալու ողորմութիւններուս անձամբ բաշխողը պիտի ըլլամ : Ես իմ ստացուածքիս տնտեսը պիտի ըլլամ . ասանկ կ'զգամ ու կը հաւատամ ալ որ ուրիշները երջանիկ պիտի կրնամ ընել , ու անոնց օգնել : Թէ որ տեսնէիր աս օրուան ան խեղճ որբեւարիին և անօգնական տղոցը ուրախութիւնը՝ երբ որ ես անոնք մաքուր օդ բանող հանգիստ բնակարան մը փոխեցի , պիտի զգայիր թէ կ'արժէ որ մէկ մարդ մը ապրի՝ միայն աս բանը ըրած ըլլալու համար . և դո՛ւն ես՝ Պարոն , Նստուծմէ ետև բոլոր ասոնց պատճառը . ուստի մենք զործակից չըլլա՞նք պիտի այսուհետև՝ և զժբաղդներու օգնելու բաժանորդ , ու Տէրը ինչ որ իմ ձեռքս յանձնած է՝ անոնք զործածենք աւսթիները կերակրելու , մերկերը հագուեցընելու , և Ֆրկչին սէրը անոնց ճանջօքը ներու» :

Ես խօսքերուն վրայ միւսը ըսաւ . «Ըն բոլորը Տէրոջը ըրած գործքն էր , իմ սիրելի բարեկամս . Ըն՛որ շնորհակալ եղեր , չէ թէ ինծի : Ես Ընկէ խնդրեցի թէ ի՞նչ կրնամ ընել քեզի՝ քու միտքդ զրած սոսկալի գործէն քեզ ազատելու համար , և Ինքը ճամբան ցուցուց՝ ու դուն ալ ազատեցար» :

ՆՊՐԻԸ ՈՒ ՄԵՌՆԸ . Եղէկ մտնելու ամենն ապահով կերպը աղէկ ապրելն է , կ'ըսէ բարեպաշտ Բրիտանոնայի մէկը : Նստուած՝ մարդոց ճիշդ մտած կետին ընայիլ թէ անոնք ինչպէս կը մտնին , այլ ինքը պիտի դատէ մարդիկը անոնց իրենց կեանքին մէջ ըրած գործքերուն համեմատ . ան յօժարութիւնները՝ որոնք մնք սնուցինք , սիրելիք և որոնցմով զուարճացանք մեր կենացը մէջ՝ մեզի հետ պիտի երթան հանդերձեալ աշխարհը . Ի և մեր մէկ գէշ բնութիւնը՝ որչափ որ մեզի զրուելի ըլլայ կամ տրամադրէ մեզ , տակաւին դժոխքին անդունդը մեզ պիտի թաղէ :

ՀԱԳՈՒՍՏԻ ՎՐԱՅՈՎ ԽՐԱՏՆԵՐ

Հագուտը՝ տաք պահելու, պարկեշտութեան, և հանգստութեան համար եղած է. ո՛չ թէ պերճ ցոյց քմը ընելու համար, ո՛չ թէ սնտփառութիւն և հպարտուն զրգոտելու համար: Օգո՛յշ եղիք ուրեմն՝ որ ձեր առողջութեանը, պարկեշտութեանը կամ հանգստութեանը բնաւ վնաս մը չհասցընէք՝ զարդարանքի սէր մը ձգելով:

Չեր ժամանակին՝ ստակին կամ մտածմունքներուն միայն մէկ պզտիկ մասը հանդերձի տուէք. ասոնցմէ շատ աւելի կարևոր բաներ կան՝ որ մեծագոյն մասը կը պահանջեն:

Չեզ ուրիշներուն հաճելի ընծայելու համար՝ մարմիննիդ ծածկող հագուստէն աւելի՝ աղէկ բան մը նայեցէք որ ունենաք միշտ: Թէ որ միայն անոնք են ձեզ հաճելի ընծայելու գլխաւոր բանը, յայտնի կը ցուցընեն թէ անոնք ձեր սրտին մէջ առաջին տեղը գրաւած են. կամ ուրիշ խօսքով, թէ դուք ունայնասէր և թեթեւ բնաւորութիւն մը ունիք:

Հանդերձի սէր ունենալու դէմ զգուշութիւն ըրէք: չըլլայ որ ինքզինքնիդ շուրջորդելու՝ չափազանց ծախք ընելու՝ ստակներնիդ վատնելու և սնանկանալու վիճակին հասցընէք: Միտքերնիդ բերէք՝ որ ո՛չ գեղեցիկ հագուստները, ո՛չ ալ անձնական գեղեցկութիւններնիդ երկարատեն զիմանալու բաներ են: Շատէն շատը՝ քանի մը տարիներէն ետև ուրիշ հագնելիք բան մը չլիտի ունենանք, այլ միայն մարմիննուդ վրայէն պատանք մը՝ և դուրսէն սնտուկ մը, և հիանալի ըլլալուն տեղը՝ զգուշելի պիտի ըլլանք:

Մէկ հանդերձ մը կայ՝ որ բնաւ չմաշիր ու չհինար, որ է Քրիստոսի արդարութեան հանդերձը:

«Ո՛չ կը մաշի, ո՛չ կը հինար,
Ու ո՛չ ցեցէն ալ կը վախնայ,
Եղտ չըռնէր, միշտ կը փայլի,
Քանի հագնիս, ա՛լ կը փայլի»:

Վմէն բանէն վեր՝ ան հանդերձովը հագուել, ու Սուրբ Հոգիին շնորհներովը

զարդարուիլ նայէ. ասոնք մեզ յարմար պիտի ընեն երկնային աշխարհին մէջ բռնակելու, ուր որ հրեշտակներուն հագած հագուստները պիտի հագնինք:

Միւս կողմանէ ալ՝ չափազանց պարզութեան, և սովորականէն դուրս եղական ցոյց մը ունենալու ծայրը մի՛ վազեր: Հագուստի կողմանէ յարմար միջակ աստիճանը կրնանք սա բաւերով աղէկ բացատրել. պարզ, վայելուչ և յարգական:

Քու հագուստը թո՛ղ ըլլայ մաքուր, պարկեշտ, յարմար ամէն ժամանակի և եղանակի. և որչափ որ վերոգրեալ խորատներուն համաձայն կու գայ, քու ընկերակցութիւն ըրած անձինքներուդ ալ հաճելի ըլլայ:

Ես նիւթին վրայ հետեւեալ պատմութիւնը կ'աւելցընենք՝ որ աշխարհիս մէջ եկած երևելի ինքնակալի մը հագուստին վրայ գեղեցիկ օրինակ մըն է: Շարլըման կայսրը պարզ հանդերձ մը կը հագնէր, բայց ՚ի հրապարական առիթներէն՝ որ ասոնք արքունական սովորութիւնը կը հարկադրէր զինքը աւելի փառաւոր և շքեղ երևոյթ մը ունենալ: Իր պարզ բուրթեղէն զգեստովը՝ և կապուտ գօտիովն ու ջրշունի կաշիէ վերարկուովը՝ իր ստորին կարգի հպատակներէն հազիւ թէ կ'որոշուէր: Իր պալատականները թէպէտ՝ շատ պճնազարդ և արտաքոյ կարգի շապլ էին իրենց հագուստին կողմանէ. ուստի ինքը հաստատ միտքը դրաւ որ աս բանին վրայ իրենց անանկ դաս մը տայ՝ որ շուտով մտքերնէն չելլէ:

Վատու մը՝ երբ որ իրենց սովորական յարգանաց ողջոյնը տալու եկան, տեսնելով որ շատ սուղ և նուրբ հանդերձներով հագուած են, նոյն կէտին առաջարկեց որ որսի ելլեն իրեն հետ անմիջապէս: Թագաւորի մը հրաւերը մերժել չըլլար. ուստի պարտաւորեցան իրենց վրայի հագուած հանդերձներովը երթալ:

Թագաւորը իր սովորական կաշիէ կրկնոցը վրան առած էր՝ որ զինքը կրնար սաստիկ ձիւնէն աղէկ մը պաշտպանել, որն որ իր դիտաւորութեանը շատ յարմար կերպով մը՝ եկաւ իրենց որսորդութիւն ըրած միջոցին: Բայց ան բարակ և չքնաղ

վերարկունները՝ որ իրեն պալատականները վրանին առած էին, պատառ պատառ եղան փշոտ թուփերէն. և ձիւնին թացնալ մինչև մարմիննին անցաւ :

Պալատը դարձած ատեննին՝ ինքնակալը անոնք հրամցուց որ իրեն օրինակին հետեւին, և լաթերնին չորցընեն ան մեծ կրակին քօլը՝ որ ինքը աս բանին համար հրաման ըրած էր վառելու : Կրակը հագուստներուն անկարգութիւնը աւելցուց՝ մետաքսէ զգեստներուն գոյնը նետելով և կռնձմտցընելովը . անանկ որ խայտառակ տեսարան մը եղան :

Կայսրը՝ իրենց արտաւոյ վարմունքին վրայ զերենք ծաղրելէն ետև, ըսաւ . «Ի ուր հիմա կը տեսնէք ձեր ղեղխութեանն ու իմ պարզութեանս մէջտեղի տարբերութիւնը : Իմ հագուստս զիս կը պահպանէ և կը ծածկէ, ու զիւրաւ ալ չփասուիր կամ աւրուիր . և թէ որ աւրուի կամ հիննայ ալ կորուստը չնչին բան մըն է . բայց գանք որ ձեր շքեղ զգեստները քիչ օգուտ ունին, շուտ մը կը փչասուին մէկ փոքրիկ զիպուածով մը, և ծախքին չափազանցութեանը կողմանէ ալ բաւական մեծ բան են» :

Աղէկ կ'ըլլար թէ որ հարուստներն ու մեծամեծները Շարլըմանին օրինակին հետեւելով՝ հանդերձի կողմանէ միշտ անզարդութեան և պարզութեան օրինակ մը ըլլային . բայց քանի որ անոնք անանկ չեն ընէր, աղէկ է որ սա հետեւեալ խրատը տանք . Հագուստի կողմանէ բնաւ հարուստ մեծամեծները քեզի հետեւելու օրինակ մի՛ բռնէր :

Աս յօշուածս կը վերջացընենք երևելի մատենագրի մը ըսածը յառաջ բերելով . Ան անձինքը քիչ վտանգի մէջ են իրենց ժամանակին և ուշադրութեանը մեծ մասը հանդերձնուն համար ծախք ընելու՝ որոնց որ սիրտը բարձրագոյն և լաւագոյն բաներու սիրովը լցուած է :

ԱՂԵՎ ՓՈՐՁԱՔԱՆՐ ՄԸ . Ան ամէն հետամուտ եղաց բաներնիս՝ որոնց համար Մտուածոյ պաշտպանութիւնը չենք կրնար ինչորևէ իրմէն, մեղալից են . և ան ամէն զուարթութիւններնիս որոնց համար որ չենք կրնար Մտուածոյ չորհակալ ըլլալու համարձակել, անմեղ չեն կրնար ըլլալ :

ԳԻՏՔ, ՀՆԱՐՔ, ԵՒ ԶԱՐԳԱՑՄՈՒՆՔ
ՅԱՄԻ ՏԵՍՈՆ

Թատրոնական արարուածքներուն առջե անգամ Անգղիայի մէջ կատարուելը 1378
Խաղի թուղթին՝ Գաղղիայի Թագաւորին զըօսանայը համար հնարուելը . . . 1390
Հնդկահաւերուն առաջին անգամ Ամերիչայէն Անգղիա մտնելը . . . 1412
Ալճեպրան՝ Սարակինոսաց ձեռօք Եւրոպա մտնելը . . . 1412
Թուղթը՝ առջի անգամ քուռչի կտորուանքներէն շինուելը . . . 1417
Հրացանին հնարուելը, և առաջին անգամ Անգղիայի մէջ գործածուելը . 1421
Գրհանին հնարուելը . . . 1425
Տպագրութեան սկզբնաւորելը՝ Փօսթին ձեռամբ . . . 1441
Փայտին վրայ քանդակ փորագրուելուն հնարուելը . . . 1460
Թղթատարութեան նամակատուն հաստատուելը Եւրոպայի մէջ՝ Գաղղիա 1464
Գաճէ թափծուին Ֆիորէնցայի մէջ առաջին անգամ հնարուելը՝ Վերիգիօի ձեռամբ . . . 1470
Օրացոյցին առաջին անգամ Պուտայի մէջ հրատարակուելը . . . 1470
Տպագրութեան Անգղիա մտնելը Գօքսթրնի ձեռամբ . . . 1474
Գութակին հնարուելը . . . 1477
Գրանցքներուն հիմնական կերպով շինուելուն Եւրոպայի մէջ առաջին անգամ սկզբնաւորութիւնը . . . 1481
Աշխարհացոյց և Ծովացոյց տախտակներուն առաջին անգամ Անգղիա տարուելը . . . 1489
Անդամանդներուն յղկուելն ու կրտարուելը . . . 1489
Յունարէն լեզուին Անգղիայի մէջ սորվուելու սկզբնաւորութիւն ըլլալը՝ Կրօսիներն ձեռամբ . . . 1491
Հիմնական եղանակաւ ամրութիւններ շինելու սկզբնաւորութիւնը . . . 1500
Շաքարին գտնելու սկզբնաւորութիւնը՝ Վենետիկցիի մը ձեռամբ . . . 1503
Եւրոպական գլխանոցին Եւրոպայի մէջ Փարիզ սկզբնաւորութիւնը . . . 1504
Պարտիզպանութեան արհեստին Անգղիա մտնելը՝ Նեալլանտի երկրէն . . . 1509

Դամացոյցին առաջին անգամ Նուրիմ
 պէրկի մէջ շինուիլը 1517
 Հրացանի փակաբէին (լագճա) հնա
 րուիլը՝ Նուրիմպէրկի մէջ 1517
 Ստուերասենեակին հնարուիլը 1517
 Գրականութեան մէջ կետազրութեան
 առաջին անգամ գործածութիւնը 1520
 Չոգոյաթին Մնղղիայի մէջ գործածուե
 լու սկզբնաւորութիւնը՝ Մեքսիքոյէն 1520
 Արզի Եւրոպային մէջ՝ քաղաքներուն
 ճամբաները գիշերները լուսաւորուիլը 1523
 Օճառին առաջին անգամ լոնտոնի և
 Պրիսթըրլի մէջ շինուիլը 1524
 Մանեղու գործիքին հնարուիլը՝ Պրընս
 ուիքին մէջ, Կրճէնին ձեռամբը 1530
 Արեգակնային գրութեան ճիշդ հայե
 ցողութիւնը Կոպենիկոսին գտնելը 1532
 Պղնձի վրայ փորագրութիւն հնարուիլը՝
 Ֆիմինկերին ձեռամբը 1551

ԳՐԳԹՈՒԹԻՒՆՆՈՎ ԲԱՆ ԸՆՏԼ

Ի սոնական անձ մը՝ հրապարակաւ խօս
 ուած ճառ մը լսելէն ետեւ , որ իրեն շատ
 հաճելի եկած էր , տունը դառնալու ա
 տենը ճամբուն վրայ աղէկ հազուած ան
 ձի մը հանդիպեցաւ՝ որ ըստ զիպաց ի
 րեն բան մը հարցուց : Ըս հարցումէն
 ետեւ տաք խօսակցութիւն մը տեղի ունե
 ցաւ , և ասիկա այնչափ հաճելի եկաւ
 զիսնականին որ՝ դժուարաւ բաժնուե
 ցաւ աս իրեն նոր ծանօթացած մարդէն :
 Բաժնուելէն վայրկեան մը ետքը՝ ուղիով
 որ ինչ ատեն ըլլալը զիսնայ , ժամացոյցին
 նայելու համար ձեռքը գրպանը տարաւ .
 բայց ապշութիւնը պատեց զինքը՝ երբ տե
 սաւ որ ժամացոյց չկայ հոն : Ընմիջապէս
 միտքը ինկաւ որ՝ քսակահատներուն (Էս
 Իսթի) սովորական կերպը ան է որ պատ
 ուաւոր մարդոց պէս աղէկ հազուելով զի
 մացինին խօսքի բռնեն , ու վարպետու
 թեամբ մը իրենց գործողութիւնը զիւրին
 ցրեն : Տարակոյս չկայ որ իր կասկածը ան
 միջապէս ան նոր ճանչորին վրայ եղաւ :
 Բարեբաղդաբար տակաւին աչքին առ
 ջեկն աներևոյթ եղած չէր : Ուստի ե

տեկն վազեց արտորնօք , և անոր հասաւ :
 «Տո՛ւր տա ժամացոյցը» , ըսաւ ինքը հաս
 տատ ձայնով մը . «Եթէ ոչ՝ հետեանքը պիտի
 տեսնես» : Ընծանօթ Պարոնը կամ քսակա
 հատը զեղնեցաւ մնաց , և վայրկեան մը
 կանկ առնելով պաղած կը նայէր , և անանկ
 կ'երևար որ իբր թէ դէմ զնելու միտք ու
 նի . բայց միևսին վճռական ձայնը և շար
 ժուածքը՝ վրան վախ մը բերելով , ժամա
 ցոյցը տալու զիջաւ : Դամացոյցը առնելով
 անկէ առաւ քաղց մարդը , ու իր ցոյց
 տուած քաջութեանը վրայ ինքն իրեն
 պարծենալով տուն գնաց : Ըս դէպքը իր
 կնոջը պատմեց . բայց ան զինքը զոյելուն
 տեղը՝ ինչպէս որ ինք կը մակաբերէր ,
 բարձր ձայնով մը պատասխանեց . «Ի՞նչ
 կ'ըսես Պարոն Յակոբ , դուն ատ ի՞նչ բան
 ըրիր : Բուն քու ժամացոյցը սեղանին վը
 րայ դրած է , ուր որ ձգած էիր դուրս եր
 թալէդ առաջ : Ըս ի՞նչ բան է որ եղաւ .
 միթէ ես իմ երկանա քսակահատ ըլլա՞ն
 ալ պիտի տեսնէի» : Պ . Յակոբ վար
 նատաւ զողզողալով ու սարսափած : Ըս կնո
 ջը բոլոր ըսածները իրաւ էր : Իրօք ինքը
 հասարակաց ճամբաներուն վրայ մարդ
 հանուցընող աւաղակներէն վար չէր մը
 նար . բանի որ ինքը կը կարծեր թէ միայն
 գողցուած բանը ետ կ'առնէ : Ըն գիշերը
 շատ քիչ քնացաւ : Չեռնամարտութեան ,
 կռիւհարութեան և ապտակներու հար
 ուածներ կը տեսնէր երազին մէջ . բանտի
 արգելարաններ՝ դատաւորաց ատեան և
 այլ ասոնց նման հազարումէկ բաներ իր
 խոովեալ մտքին առջևը կու դային . ուս
 տի աս անհանգիստ վիճակին մէջէն մէկէն
 ցատկեց ելաւ անկողնէն՝ ուր որ այնչափ
 նեղութիւն քաշած էր , և առտու ըլլալով
 Օրագիրներ եկան իրեն՝ որոնց մէջ սա
 հետեւեալ ազգարար յօդուածը կարդաց :
 «ԲՈՒՆԵՐԸ ԵՂՆԱՆՆԵՐՈՒՄԻՆԻՆ ՍԵ
 Իմացանք որ Պատուելի Պ . Գ . երէկ
 իրիկուն ճառ մը լսելէ դառնալէն ե
 տե՛ անծանօթ մէկէ մը բռնական յարձա
 կում մը կրեց , միանգամայն զինքը մեռ
 ցրնելու սպառնալիք ըլլալով՝ թէ որ ան
 միջապէս իր ժամացոյցը չտայ : Ուստի

պարտաւոր եղաւ ժամացոյցը տալու : Ըստ եղեւնագործութիւն ընող մարդը՝ Թանձ բամբակին ու կարճ մէկն է եղեր , և դէմքըն ալ վայրագ գծագրութիւն մը ունի եղեր” :

Ըստիկա չէր կրնար մարդուն գրգռեալ ջղերը հանդարտեցնել : Հազիւ թէ մէկ ճամբայ մը կրնար գտնալ աս գծուարակնձիւն վիճակէն ինքզինքը սկրդելու : Վերջապէս բանը հոն հասաւ որ՝ բռնէ կինը խրկէ ժամացոյցովը մէկտեղ Պատուելի Պ . Գ . ին , պարզապէս եղած սխալանքը խոտովանելով . և խնդիրք ընէ որ աս բանին նկատմամբ իրեն քննութիւնները մէկ դի ձգէ : Ըստ բանախօսութիւնը յաջող եղաւ , և մարդը իր սարսափէն ազատեցաւ : Հարկ չէ հոս աւելցնել , որ աս մարդը հասարակաց ճամբաներուն վերայ մարդ հանուցընողներուն ըրած աւազակութիւնը նորէն ընելու փորձ մը չըրաւ , աս փորձանքը գլուխը գալէն ետեւ , վերջապէս սա խոհական որոշումը ընելով թէ՛ “Ընտրեցնելու ճամբան դժուարին է” :

ՎՕԼԹԵՌԻՆ ՄԱՀԸ

ՎՕԼԹԵՌԻՆ սոսկալի մահուանը մանրամասն պատմութիւնները մեր յարգոյ ընթերցողներէն շատին ծանօթ ըլլալով , հարկ չկայ նորէն անոնք կրկնել . ուստի հոս բաւական կը համարինք միայն աս հետեւեալ վաւերական պատմութիւնը յաւելցնել : “Բանի մը տարի առաջ՝ կրօնասէրներուն մէջ անուանի և պատուաւոր եղած անձ մը , յետագայ դէպքը պատմած է ինծի : Իր երիտասարդական հասակին մէջ՝ երբոր իր զպրօցի ընկերակիցներուն մէկուն հետ Եւրոպա ճամբորդութիւն ընելով Փարիզ հասաւ , իր բարեկամ ընկերը ծանր հիւանդութենէ մը բռնուեցաւ : Հոն խիստ հուշակաւոր բժիշկ մը բերին անմիջապէս՝ որ ըսաւ թէ շատ վտանգաւոր է հիւանդին վիճակը , և թէ անկէ ազատին ալ ըստ մեծի մասին իրեն պատուիրածները ճիշդ կատարելէն կախում ունի : Եւ որով

հետեւ հիւանդին քովը անանկ մէկ հաւատարիմ մէկը չկար՝ որ անոր ձեռքը յանձնելու վտահութիւն ընէին , բժշկին խնդիրք ըրին որ ինքը մէկ հաւատարիմ և փորձառու դարմանիչ մը առաջարկէ : Ինքը մէկուն համար ըսաւ . բայց սա ալ յաւելցուց թէ՛ Վրաւ որ դուք ձեզ երջանիկ սեպելու եք , թէ որ անիկա հիւանդին քովը կենալու հաւանութիւն տայ . վասն զի աս քաղաքին մեծամեծ ընտանիքներուն մէջ ինքը այնչափ կը փնտուռի որ՝ շատ մեծ բարեբաղդութիւն մըն է անիկա պարապ գրտնելը” : Ըստ դէպքը ինծի պատմողը շուտ մը հրաման ըրաւ որ կառքը պատրաստուի , և հեծնելուն պէս մէկէն անոր բնակարանը գնաց . և շատ ուրախացաւ զինքը տունը գտնելովը : Համառօտ կերպով մը պատմեց իրեն անոր երթալուն պատճառը , և խնդրեց որ անմիջապէս երթայ իր հետը և հիւանդին հոգ տանի : “Բայց քեզի հետ երթալէս առաջ՝ կրներես ինծի Պարոն” , ըսաւ ինքը , “որ քեզի մէկ բան մը հարցնեմ : Ձեր բարեկամը Բրիտանոնեայ է” : “Այո՛” , պատասխանեց ինքը . “իրաւ որ ինքը Բրիտանոնեաներուն ալ աղէկներէն աղէկն է . անանկ մէկն է որ՝ միշտ Բատուոյ երկիւղովը իր կեանքը մինչև հիմա անցուցեր է : Բայց կը խնդրեմ որ աղ բանը հարցնելուդ պատճառը ինծի իմացընէք” : “Պարոն” , ըսաւ , “ես ՎՕԼԹԵՌԻՆ վերջին հիւանդութեան ժամանակը իր քովը դարմանող էի . ու թէ որ Եւրոպայի բոլոր հարստութիւնները ինծի տալու ըլլան , ես բնաւ չեմ կրնար ուրիշ մէկ անհասարակ մըն ալ մեռած ժամանակը քովը գտնուիլ” :

ՈՒՆԱՅՆ ԱՅԿԵԱԼՈՒԹԻՒՆ . Թէ որ մարդ մը տեսնես որ դիզուած ձիւնը կը փորէ՝ մէջէն հանք գտնելու համար , կամ ծովուն ծիւցող ալիքներուն վրայ սերմ կը ցանէ , անմիջապէս պիտի ըսես թէ ան մարդը խելքը կորսնցուցեր է : Բայց ի՞նչ կողմանէ տարբերութիւն պիտի ունենաս դուն՝ երբոր ծովութեան և զբօսանքի ժամանակ վատնելու սերմը կը ցանես պատանկութեան հասակիդ մէջ , և կը յուսաս թէ տարիքը առած ժամանակը , կեանքը առողջ՝ սիրտը վսեմ՝ զբացումներով լեցուն՝ և հոգիդ ալ սուրբ սկզբունքներով դարգացած պիտի ըլլայ :

ԱՍՏՈՒԾՈՅ ԳՈՐԾԱԿԻՅ ԸԼԼԱԼ

«Գործեցէք ինչու որ Աստուած է՝ որ ձեր մէջը կը ներգործէ» : Ըստ սուրբ երկիրին ու միանգամայն սուրբ քաջալերութեանը գեղեցիկ կապակցութիւնը բողոքովին Աստուծոյ կախումն ունենալու՝ և միանգամայն առանց նուաստացնելու, և նախանձաւոր կերպով « մեր կոչումն ու ընտրութիւնը ապահովընէ » աշխատելու, հոգեւոր միտք մը կը պահանջէ՝ որ անկախ ստանայ կամ ինչպէս ըլլալը հասկընայ : Եւ չէ թէ աս կապակցութեան մէջ անխնայաբար մէկ զաղտնիք մը կայ, ըստ որում մարդիկ միշտ նոյն ճամբով աշխարհային գործառնութիւններնուն մէջ կը շարունակեն իրենց գործը : Երկրագործը իր արտը կը մաքրէ և կը պատրաստէ, հունտերը կը ցանէ և բոլոր պէտքեղած աշխատութիւնները ժրութեամբ կը կատարէ, և անկէ ետեւ ալ ինք բան մը չկրնալ ընելիքը կը ցուցնէ : ալ կը սպասէ առատ արդիւնք ժողովելու, կը մտածէ անոր վրայ, կը խօսի ՚ի խորոց սրտէ, և նոյն ատենը աս ալ անուրանալի բան մըն է որ՝ մէկ ցորենի հատ մը անգամ չկրնար մէկը բուսցընել : Արեգակը պէտք է որ անոր վրայ ծագէ, անձրեւը ջրոտէ, հողը սնուցանէ . բայց ասոնց մէկուն ալ մարդ հրաման չկրնար ընել :

«ԱՀԱ ԻՐԵՔ ՏԱՐԻ Է»

«Ահա իրեք տարի է» : Միտք մա որ Աստուած ճիշտնար թէ որչափ ատեն գէշ կերպով անցուցիր . վասն զի «աս իրեքը» այսքան ժամանակ կը ցուցընէ : « Երբ որ պտուղի ժամանակը մտնեցաւ », այսինքն անոնց հասուննալու սկսած ժամանակին մօտ՝ կամ թէ ան ժամանակը որ պտուղ տալու էին : Անպտուղ թղենի . դուն՝ ժամանակ, պատեհ եղանակներ, քաղողիչ, նեղութիւն, պատիժ, գթութիւն և ինչ ըսես որ չունեցար, ու անանկ ըլլալով տակաւին պտուղ չտուիր . դուն արթնութիւն, յանդիմանութիւն, սպառնալիք,

հանգստութիւն ալ ունեցար և տակաւին անպտուղ եղար : Գուն օրինակ, զաղափար, կոչումն, գրգիռ ալ ունեցար և սակայն անպտուղ եղար : Ըստ աղէկ, Աստուած ան իրեք տարին իրեն առաւ : Ինքը կը յիշէ ամէն ատեն, եղանակ, քարոզ, քարոզիչ, նեղութիւն, պատիժ, ողորմութիւն, արթնութիւն, օրինակ, զաղափար, կոչում, գրգիռ . ինք ամէն բանը կը յիշէ :

ԱՆՅԱՒԱՏԻ ՄԸ

ԻՐ ԶԱԿԻՆ ԶԱՄԱՐ ԸՐԱԾ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Այսպուհը Գերմանացի գիտնականը՝ որ Պատմագիրներուն մէջ իշխան կոչուած է, նմանապէս երկրայող անհաւատներուն մէջ ալ երեւելի էր : Իր բոլոր կեանքին մէջ փորձ ընելով, և իր ընտրած կերպով փորձով հասկընալով իրենց ըսած բանավարութեան և երկբայական դրութիւնին ազդեցութիւնները՝ իր զակին համար կ'ըսէ . « Անկէս էին և Մոր կրօնարանին գրոյն պիտի հաստատայ . և ես ալ՝ իր պղայ հասակէն պիտի անոր մէջ հաստատար հաստատ մը անոցանէմ ան ամէն բանէրուն մէջ, որոնք որ ես կորուսեցուցի՝ կամ որոնց վրայ ես անպայտ լինակի մէջ մտայ » :
 Ասիկա ի՞նչ մեծ վկայութիւն մըն է Վրդիստոնէական դրութեանը կողմանէ, ու միանգամայն ալ ի՞նչ զատակնիք մըն է անհաւատութեան :

ԳԻՒՏՔ . Ատումնականին մէկը հիմակաւն գիտորուն օգտակարութեանը վրայ խօսելով՝ սա համարուող մէկ բովանդակութիւնը կ'ընէ : « Տղայ մը՝ Գուրորինիբրին հնարած թուղթ շինելու գործիքով, տարուան մը մէջ աւելի թուղթ կը շինէ, քան որչափ որ բոլոր խօսակտորի մէջ հարկը տարին կրնար շինուիլ Պողոտնոսի ժամանակը : Աղջիկ մը՝ շոգիէ մամուլով մը կրնայ այնքան բան տպել, որչափ որ սպաղրութեան գիտէն առաջ՝ միւտն մը գրագիրները կրնային օրինակել : Բաները մը՝ երկաթի գործարանի մէջ կրնայ աւելի գործիքներ շինել, քան որչափ որ լծուել կայնը կրնար շինել՝ թէ որ անատենէն մինչև հիմա տպրելու ըլլար, և շարունակ ջանքով բաներ :

ԳՉՏԻԿ ՍԿԶԲՆԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր բոլորտիքն եղած բոլոր բաները մեզի կը սորվեցընեն որ՝ պզտիկ սկզբնաւորութիւնները ոչինչ բանի տեղ չընենք . վասն զի անոնք սանդուղին աստիճաններուն վարի ոտքն են՝ որ շատ բարձր հետեւութիւններու կրնան հասնիլ . և մենք ալ ամենէն վարի ոտքը կոխելու ենք առաջ՝ որ վեր ելլենք : Գիտութեան պըզտիկ սկզբնաւորութիւնները ոչինչ բանի տեղ մի ղներ : Ընչակաւոր Ֆրանքլին փիլիսոփան՝ տղայութեան ատենը շատ քիչ դաստիարակութիւն առած էր . սակայն ետքը շատ ընդարձակ գիտութեան տէր եղաւ : Էրշէլ՝ ան մեծ աստղաբաշխը՝ պատանեկութեան ատենը , զօրաց առջեւէն դացող թմբուկ զարնողներէն (սալոն-ճոն) մէկ մըն էր . և թմբուկ զարնող տղու մը առածէն քիչ մը աւելի գաստիարակութիւն ընդունած էր . բայց հիմա իր անունը՝ գիտութեան մէջ եղած ամենաչքեղ գիտորուն հետ միացած է : Իւրաւոր օրինակներ դէմերնիս կ'ըլլեն սա բանը՝ վկայելու թէ՛ պատշաճ կերպով զարգացընելով գիտութեան մէջ ըրած փոքրիկ և թերևս անկատար սկզբնաւորութիւններովս , կրնանք ամենէն հանձարեղ և խելացի անձը ըլլալ՝ մեր արհեստին և պաշտօնին մէջ : Ոչինչ բանի տեղ մի ղներ սխալանքի և մեղաց պզտիկ սկզբնաւորութիւնները : Իերզին պատերը հիմէն փորուեցան՝ մանր և չնչին սեպուած կենդանիներէ . և սխալանքի ու եղեռնագործութեան սկզբնաւորութիւնը՝ թէ և սկիզբէն անզգուշութեամբ ըլլայ , թէ որ չսանձուի՝ շուտով ճշմարտութեան , առաքինութեան և բարի վարուց հիմը պիտի քանդէ : Ընչն սխալանքները ընդհանրապէս պզտիկ կ'ըլլան . չնչին բան մի սեպեր անոնք . վասն զի հետզհետէ կը մեծնան , ու վերջապէս քեզ կը կործանեն :

ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՀՐԱՇԱԼԻՔ

ՆՈՐԱՇԵՆ ՔԻԹ ՄԸ

Միացեալ Նահանգաց օրագիրներէն մէկուն մէջ ընդարուծութեան վրայ մէկ զարմանալի պատմութիւն մը եղած է , բոլորովին փոտած ու ինկած քիթի մը՝ նորէն կատարեալ ու վայելուց ձևովը յարմարեցած ըլլալուն վրայ :

Բսկէ տամուհինգ տարիի չափ առաջ քիթը կորսնցուցեր էր մէկը սնդկային դեղը մը պատճառաւ՝ որ մաղձային ջերմի համար իրեն տրուած էր : Քիթին մէկ ծակը միայն մնացեր էր : Ինքը լսելով որ աս իր կորսնցուցած քիթին տեղը գալը հարաւոր է , որոշեց անոր փորձը ընելու . և հետևապէս ելաւ Ֆիլատեյֆիա քաղաքը գնաց աս բանին համար յատկապէս : Գործողութիւնը կատարուեցաւ , և մարդը իր տեղը դարձաւ ամէն յատկութիւններովը կատարեալ քիթ մը ունենալով՝ որուն երևոյթքը բնական էր , զգայուն և աչքի ալ խոր չէր տեսքը և ճիշդ ուրիշ մարդոց քիթին նման էր : Ըս վերաբուժական գործողութիւնն ընողը Ղօղէֆ Բանքօթ . Վ . Բ . էր՝ որ Ընդամահատութեան դասատու մըն է ինքը Ֆիլատեյֆիայի մէջի Ղեֆըրսնի բժշկական Գպրոցին , և իր օգնականն ալ Տօթթօր Չարլս Բ . Թըրնըր բժիշկն էր : Ըս գործողութեան պատմութիւնը այնքան հետաքրքրական է , ու վարպետ բժիշկներուն ալ ծանօթ ու հաւատալի՝ որ մեր յարդի ընթերցողներուն հաղորդելու արժան սեպելով հոս պիտի ղենք հիմա բուն իսկ ան մարդուն պատմութեանը գլխաւոր մասերը՝ որուն վրայ որ աս գործողութիւնի կատարուեցաւ :

«Ղեֆըրսնի բժշկական Գպրոցին մէջ . Տօթթօր Չարլս Բ . Թըրնըրին ներկայութեանը , և զպրոցին մէջի բոլոր Ուսանողներուն մէկտեղ ժողվուած ըլլալովը Տօթթօր Բանքօթ գործողութիւնը սկսաւ : Նախ և առաջ աս գործին ձեռք զարկած ատենը ճակատիս միսէն այնքան մը կտրեց՝ որ քիթ մը ղնելու բաւական էր . ետքը ծայրերը շտկեց , և ճակտէս կտրած միսը

կարեց՝ իմ բուն քիթիս ինկած տեղին պարպ միջոցին հետ, և ան ալ հասարակորէն կարուած տեղե մը կամ վէրքի մը պէս շինեց: Ոսկիէ խողովակներ տուած էի՝ որ ուռնգերէս հանգիստ շունչ տամ առնեմ, ասոնք անմիջապէս վերցուց, երբ որ տեսաւ թէ ալ բաւական յառաջ գացած է քիթիս բժշկութեանը: Ես նաև կաղապար մը շինեւ տուած էի կոմիտէի քերական ըսուած նիւթէն՝ որ իմ հօրս քիթին վրայ կաղապարուած էր. ասիկա ալ իմ նոր քիթիս վրայ երկզով մը կապուեցաւ՝ որով ճիշդ իմ ուզած ձևս առաւ: Ես գործողութեան հինգերորդ օրը կարերը քակուեցաւ, և եօթը շաբաթէն քիչ մը աւելի քչեց մինչև որ բոլորովին շիւան զանոցէն դուրս արձակուեցայ, ալ անկէ ետև դարմանի մը կարտուութիւն չմնալով: շիւան ես նոր քիթ մը ունիմ, հաստատ ու աղէկ ձևակերպած, ու ջօշափման և հոտառութեան բոլոր զգացողութիւնովը աննկ գեղեցիկ և կատարեալ է՝ որ որչափ որ կրնամ յիշել, առաջուան ունեցածէս պակաս բան մը չունի: Ես նոր քիթս, ինչպէս որ առաջ ըսի, հօրս քիթին ձևին պէս է ճիշդ. աննկ որ քիթին ձևը անգամ Տօքթօր Բանքօթին ձեռքն է, և ինքը շատ ճարտարութեամբ կը կատարէ գործողութիւնը: Ես հիմա եռետունուհինգ տարեկան եմ կատարելապէս առողջ, և շատ մեծ ուրախութիւն ունիմ և շնորհակալ եմ որ առաջուան նման մարդ մը եղայ նորէն”:

Գ Ա Ղ Տ Ն Ի Ք Մ Ը

Քրանքին փիլիսոփան կ'ըսէ թէ՛ շատ մը գործաւորներուն մէջ մէկը կար, որ դիտեցի անոր իմ գրատունիս մօտը բանած ժամանակը՝ թէ միշտ զուարթ երես կ'երևար. և իրեն դէմը ելողին հետ անուշ խօսք մը կ'ընէր, և զուարթ ծիծաղ մը կը ցուցնէր: Հոգ չէր ամենևին թէ որ օրը խիստ ցուրտ, տխուր, կամ ամպոտ ըլլար, իր զուարթ երեսէն անուշիկ ծիծաղ մը կը փայլէր արևուն ճառագայթին պէս: Եւ տու մը ճամբան ասոր հանդիպելով՝ հարցուցի իրեն ասանկ միշտ երջանիկ ըլլալուն գաղտնիքն ինչ ըլլալը, և ուղեցի որ ինծի իմացնէ: “Պաղտնիք մը չէ՛ Պատուելի”, ըսաւ. “Ես կնիկ մը ունիմ” որ կնիկներուն պատուականն է. և երբ որ ես գործի կ'երթամ, միշտ ինծի անուշ խօսքով մը քաջալերութիւն կուտայ. և երբ որ տուն կը դառնամ, իմ դէմս զուարթ երեսով մը կ'ելլէ և կը բարևէ, և անատենը կերակուրն ալ պատրաստ կը գտնեմ. ասկէ զատ՝ բոլոր օրուանը մէջ ինծի հաճելի ըլլալիք այնքան մանր մունր բաներ ըրած կը գտնեմ տանը մէջ, որ ամառդի կերպով մարդոց հետ խօսիլը սիրտէս չգար”: Ուստի ի՞նչ մեծ ազդեցութիւն ունեցած ըլլալու է կնիկ մը մարդուն սրտին վրայ, թէ՛ զանիկա կակղացըներու՝ և թէ զուարթ և մաքուր զգացումներու աղբիւր մը ըլլալու: Ենուշ խօսք ուրեմն, զուարթ ծիծաղ մը և անուշ բարև մը տալը՝ օրուան աշխատութիւնը քաշելէն ետև, սուղ բան մը չէ, և ընտանիք մը երջանիկ ըլլալ և խաղաղ պահելու օգուտ կ'ընէ:

Բրօթէսթանդից Կոստանդնուպօլսոյ Գրքատունը որ 'ի Սաբա չէշմէսին, Մուստաֆա Փաշա խանը՝ Երևելեան ու Եւրոպական շատ լեզուներէն տպեալ Աստուածաշունչ, և Ենգղիարէն՝ Գաղղիարէն՝ Գերմաներէն ուրիշ ծախու գիրքեր ալ կը գտնուին միշտ:

Հտեմարանին Տարեկան գինը 18 շուրուշ կանխիկ, կամ ամէն մէկ ամսական տետրակին գինը 60 փարայ է:

Գործերը խրի-ելու-փօսպային ծախքը առնողն վրայ է: Փօսպային ծախքը ինայել ուղղութեամբ կրնան Տաճկաստանի բաղադները եղած որ և էջէ Բրօթէսթանդի գրքատաներուն քով գտնել: